

## ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

### ՆԻԿՈԼԱՅ ԲԵՐԴՅԱՆԵՎ

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարդու\* և նրա ճակատագրի թեման Դոստոևսկու համար նախ և առաջ թեմա է ազատության մասին: Մարդու ճակատագիրը, նրա փառապալից թափառումները նրա ազատությամբ են որոշվում: Ազատությունը Դոստոևսկու աշխարհայեցության հենց կենտրոնում է գտնվում: Եվ նրա նվիրական պաթոսը՝ ազատության պաթոսն է: Զարմանալի է, որ մինչև հիմա սա Դոստոևսկու վերաբերյալ բավարար չափով չի գիտակցվել: Բազում հասկացումներ են մեջբերում «Գրողի օրագրից», որոնցում նա իբրև թե թշնամի է եղել հասարակական-քաղաքական ազատությանը, պանդանոզական և մինչև իսկ հեղափոխական է եղել, և այս միանգամայն արտաքին մտրեցումները խանգարում են ազատությունն իբրև Դոստոևսկու ամբողջ ստեղծագործության միջուկ, իբրև նրա աշխարհայեցությունն ըմբռնելու բանալի հասկանալուն:

Այն, ինչ Դոստոևսկու «դաժանություն»-ն էին համարում, կապված է ազատության նկատմամբ իր վերաբերմունքի հետ: Նա «դաժան» էր, որովհետև չէր ուզում մարդու վրայից վերցնել ազատության լուծը, չէր ուզում մարդուն զերծ պահել փառապալանքից՝ նրա ազատագրվման գնով, մարդու վրա ազատների արժանավորությանը համապատասխանող հսկայական պատասխանատվություն էր դնում: Կարելի էր թեթևացնել մարդկային փանջանքները՝ խլելով մարդուց ազատությունը: Եվ Դոստոևսկին մինչև խորքն ուսումնասիրում է այդ ուղիները, այդ՝ առանց իր ոգու ազատության մարդու թեթևացման և կարգավորման ուղիները:

Դոստոևսկին, արդարև, հանճարեղ մտքեր ունի ազատության մասին, և պետք է դրանք բացահայտել: Ազատությունը նրա համար և՛ անպորտպոզիցիա է, և՛ թեոդիցիա, նրա մեջ պետք է փնտրել և՛ մարդու արդարացումը, և՛ Աստծու արդարացումը: Ողջ համաշխարհային գործընթացն ազատության թեմային վերաբերող առաջադրանք է, այդ թեմայի իրականացման հետ կապված ողբերգություն: Դոստոևսկին ուսումնասիրում է ազատության մեջ թողնված մարդու ճակատագիրը: Նրան միայն ազատության ճանապարհով ընթացած մարդն է հեղափոխություն, մարդու վիճակը ազատության մեջ և ազատությունը՝ մարդու մեջ: Նրա բոլոր վեպերը ողբերգություններ են, մարդկային ազատության քննություն: Մարդն սկսում է նրանից, որ ըմբոստացած հայտարարում է իր ազատության մասին, պատրաստ է ամեն տեսակի փառապալանքի, խելահեղության, միայն թե իրեն ազատ զգա: Եվ միաժամանակ նա փնտրում է վերջնական, առավելագույն ազատությունը:

\* Ներկայացվող թարգմանությունը մի հարված է Բերդյանի «Դոստոևսկու աշխարհայեցողությունը» գործից, փոխ՝ Н. Бердяевъ, Русская идея, Москва, 1999, էջ 282-297:

Երկու ազատություն գոյություն ունի. առաջին՝ նախասկզբնական ազատություն, և երկրորդ՝ հիմնական ազատություն: Այդ երկու ազատությունների միջև է ընկած մարդու ճանապարհը՝ փանջանքներով և փառապանքներով լի, երկարման ճանապարհը: Դեռևս Երանելի Օգոստինոսը պելագիականների դեմ իր պայքարում ուսուցանում էր երկու ազատությունների՝ *libertas minor*-ի և *libertas major*-ի մասին: Տարրական ազատությունը նրա համար նախասկզբնական, առաջին ազատությունն էր, որը բարու ընկրության ազատությունն է, այն կապված է մեղքի հնարավորության հետ: Գերագույն ազատությունը վերջնական, հիմնական ազատությունն էր՝ ազատություն Աստուծու մեջ, բարու մեջ: Երանելի Օգոստինոսը երկրորդ ազատության՝ *libertas major*-ի ջարագովն էր, և վերջիվերջո հանգեց նախասահմանության մասին ուսմունքին: Թեև եկեղեցական գիտակցության մեջ հաղթանակեց կիսապելագիականությունը, բայց Երանելի Օգոստինոսը կաթոլիկության վրա ազատության համար անբարենպաստ ազդեցություն գործեց: Նա հերեպսիկոսների հալածանքին և մահապարժին սանկցիա փոխեց: Աներկբայելի է մնում, որ գոյություն ունի ոչ թե մի, այլ երկու ազատություն, առաջին և վերջին, չարի ու բարու ընկրության ազատություն և ազատություն՝ բարու մեջ, կամ իռացիոնալ ազատություն և բանականության մեջ եղող ազատություն: Սովորաբար միայն երկրորդ ազատությունն էր ճանաչում, բանական ազատությունը: Եվ ավերարանական «Ճանաչե՛ք Ճշմարտությունը, և Ճշմարտությունը ձեզ ազարկդարձնի» խոսքերը երկրորդ ազատությանն են վերաբերում, ազատություն ի Քրիստոս: Երբ մենք ասում ենք, որ մարդը պետք է իրեն ազարկացուցանի ստորին փրկիչներից, կրթերի իշխանությունից, պետք է դադարի ինքն իր և շրջապատող աշխարհի ստորուկը լինելուց, ապա մենք նկատի ունենք երկրորդ ազատությունը:

Ոգու ազատության գլխավոր նվաճումը երկրորդ ազատությանն է վերաբերում: Առաջին Ադամի ազատությունը և երկրորդ Ադամի ազատությունը, ի Քրիստոս ազատությունը փարբեր ազատություններ են: Ճշմարտությունը մարդուն ազարկ է դարձնում, բայց մարդը պետք է ազարտրեն ընդունի Ճշմարտությունը, ևս չի կարող բռնի կերպով, հարկադրաբար նրան հանգեցվել: Քրիստոս մարդուն վերջնական ազատությունն է փախիս, բայց մարդը պետք է ազարտրեն ընդունի Քրիստոսին. «Դու մարդու ազարկ սերը կամեցար, որ Քեզանով հմայված և գերված ազարտրեն Քեզ հեղևի ևս, Քեզանով հմայված և գերված» (Մեծ Նավարաքննիչի խոսքերը):

Քրիստոսի այս ազարկ ընդունման մեջ է քրիստոնյայի ողջ արժանավորությունը, հավարքի ակտի ամբողջ իմաստը, որն էլ ազարտության ակտն է: Մարդու արժանավորությունը, նրա հավարքի արժանավորությունը երկու ազարտության ճանաչում է ենթադրում. չարի ու բարու ազարտություն և բարու մեջ եղող ազարտություն, ազարտություն Ճշմարտության ընկրության մեջ և ազարտություն Ճշմարտության մեջ: Ազարտությունը չի կարող նույնացվել բարու հետ, Ճշմարտության հետ, կարարելության հետ: Ազարտությունն իր ինքնագո բնությունն ունի, ազարտությունն ազարտություն է և ոչ թե բարիք: Եվ ազարտության յուրաքանչյուր խառնում ու նույնացում բուն բարու և կարարելության հետ ազարտության ժխտում է, հարկադրանքի և բռնության ճանապարհների ընդունում:

Նարկադրական բարին այլևս բարի չէ, այն չարի է վերածվում: Իսկ ազարկ բարին, որը միակ բարին է, չարի ազարտություն է ենթադրում: Մրանում է ազարտության ողբերգությունը, որը մինչև խորքը ուսումնասիրեց և հասկացավ Դոստոևսկին: Մրա մեջ է թաքնված

քրիստոնեության խորհուրդը: Ողբերգական դիպեկտիկան է բացահայտվում: Բարին չի կարող հարկադիր լինել, չի կարելի հարկադրել դեպի բարին: Բարու ազատությունը չարի ազատություն է ենթադրում: Իսկ չարի ազատությունը բուն ազատության ոչնչացմանն է փանում, չարի անհրաժեշտության վերածմանը: Բայց բարու անհրաժեշտությունն այլևս բարի չէ, քանզի բարին ազատություն է ենթադրում: Ազատության այս ողբերգական հիմնախնդիրը փանջել է քրիստոնեական միաբն իր ողջ պարմության ընթացքում: Նրա հետ են կապված Երանելի Օգոստինոսի վեճերը պելագիականության հետ, ազատության և շնորհի միջև հարաբերության մասին ուսմունքը, յանսենիզմի հարուցած վեճերը, օգոստինոսյան նախասահմանության կողմը Լութերի շեղումները, կարծես թե ամեն փեսակի ազատություն ժխտող Կալվինի մտայլ ուսմունքը:

Քրիստոնեական միաբնը ճնշված է եղել երկու վրանգավորություններով, երկու պարանքներով՝ ազատության չարիքով և հարկադրանքի բարիքով: Ազատությունը խորպակվում էր կամ նրանում դրսևորվող չարիքից, կամ ի բարին հարկադրումից: Նավաբաքնության խարույկները սոսկալի վկայություններն էին ազատության այդ ողբերգության, նույնիսկ Քրիստոսի լույսով լուսավորված քրիստոնեական գիտակցության համար այն վճռելու դժվարության մասին: Առաջին ազատության, հավաքքի և ճշմարտության ընդունման մեջ ազատության ժխտումը պետք է փանի նախասահմանության մասին ուսմունքին: Առանց ազատության մասնակցության ճշմարտությունն ինքն իրեն է հանգում:

Կաթոլիկական աշխարհը գայթակղվեց ազատությանը բախվելով, հակված էր ազատության ժխտմանը, հավաքքի ազատության, խղճի ազատության ժխտմանը, բռնության՝ ազատության և բարու մեջ: Ուղղափառ աշխարհն այդքան գայթակղված չէր դրանով, բայց և նրանում էլ դեռևս ազատության մասին ճշմարտությունը լիովին բացահայտված չէր: Քանզի գոյություն ունի ոչ միայն ազատություն ճշմարտության մեջ, այլև՝ ճշմարտություն ազատության մասին: Արդյո՞ք չպետք է ազատության մասին հավերժական թեման փնտրել նրանում, որ Քրիստոս ոչ միայն ճշմարտություն է, որն ազատություն է շնորհում, այլև՝ ճշմարտություն ազատության մասին, ազատ ճշմարտություն, որ Քրիստոս ազատություն է, ազատ սեր: Ազատության ըմբռնման մեջ այսպեղ ներքաշվում են նյութական ու ձևական /ֆորմալ/ գործոնները: Առաջին ազատությունը, իբրև ֆորմալ ազատություն, փրամադիր են ժխտելու նրանք, ովքեր արդեն ճանաչում են ճշմարտությունը և ազատությունը՝ ճշմարտության մեջ: Երկրորդ ազատությունը հասկացվում է որպես նյութական ազատություն, իբրև ճշմարտությանն ուղղված ազատություն:

Քրիստոնեական գիտակցությունը կարծես թե չի համաձայնվում կանգնել ֆորմալ հայեցակետի վրա և խղճի ազատությունը, հավաքքի ազատությունը պաշտպանել իբրև մարդու ֆորմալ իրավունք: Քրիստոնեությունը ճանաչում է ազատագրող ճշմարտությունը: Եվ այդ ճշմարտությունը բացառիկ է, այն իր կողքին չի հանդուրժում այլ ճշմարտություններ, չի հանդուրժում սուրբ: Բայց արդյո՞ք որևէ սխալ չի թաքնված այս անբասիր թվացող մտքերի ընթացքի մեջ: Միայն այն ենթադրության մեջ է թաքնված, թե խղճի ազատությունը, հավաքքի ազատությունը, չարի և բարու ազատությունը կարելի է պաշտպանել բացառապես ֆորմալ հայեցակետից: Քրիստոնեության մեջ ազատությունը ոչ թե ֆորմալ, այլ նյութական ճշմարտություն է: Քրիստոսի ճշմարտությունն ինքն ազատության մասին ճշմարտություն է:

Քրիստոնեությունն ազատության կրոն է: Քրիստոնեական կրոնի բովանդակությունն ինքը հավաքքի ազատության, խղճի ազատության, ոչ միայն երկրորդ, այլև առաջին ազատության ճանաչում է պահանջում: Քրիստոնեությունն ազատության և անհրաժեշտության ողբերգության հաղթահարումն է: Քրիստոսի շնորհը հենց ազատություն է, որը չի ոչնչացվում չարով (առաջին ազատության բացառիկությունը) և չի ոչնչացվում ի բարին սրի-չացվում չարով (երկրորդ ազատության բացառիկությունը): Քրիստոնեությունն ազատության վրա՝ սահմանելով այն իբրև բուն ճշմարտությունն ու մարդկային ազատությունը: Քրիստոսի ճշմարտությունը հեղադարձ լույս է սփռում նաև առաջին ազատության վրա՝ սահմանելով այն իբրև բուն ճշմարտության անկապելի մաս: Մարդկային ոգու ազատությունը, խղճի ազատությունը քրիստոնեական ճշմարտության բովանդակության մեջ է մտնում: Այս ամենը դեռևս մինչև վերջ չէր բացահայտվել հին քրիստոնեական գիտակցության կողմից և ամենից քիչ՝ կաթոլիկական: Դոստոևսկին հսկայական քայլ է կատարում այս ճշմարտության բացահայտման գործում:

\*

\* \*

Դոստոևսկին թողնում է մարդուն գնալու այն ճշմարտության ազատ ընդունման ճանապարհով, որը պետք է մարդուն վերջնականապես ազատ դարձնի: Բայց այդ ճանապարհն անցնում է խավարի միջով, անդունդի միջով, երկարման միջով, ողբերգության միջով: Ուղիղ և հարթ չէ այդ ճանապարհը: Նրանում, հրապուրված երևակայական փեսիլթներով, էլ ավելի մեծ խավարի մեջ ներքաշող, խաբուսիկ լույսով թափառում է մարդը: Սա երկար ճանապարհ է, նա չի ճանաչում ուղիղ բարձրանալու գիծը: Սա փորձությունների, փորձի, չարի և բարու փորձառությամբ իմացության ուղի է: Կրճարված կամ թեթևացված այդ ուղին կարող էր մարդկային ազատության սահմանափակմամբ կամ զավթումով լինել: Բայց արդյո՞ք Աստուծոն պետք են, թանկ են նրանք, որոնք Իրեն ազատության ճանապարհով, չարի ողջ կործանարարության փորձարարական իմացումով չեն գա: Արդյո՞ք համաշխարհային և պարմական գործընթացի իմաստը մարդու ազատ պատասխան սիրուն հանդիպելու Աստուծու այդ ցանկությունը չէ: Բայց հապաղում է մարդն առ Աստված այդ պատասխան սիրո ընթացքում: Նախ նա պետք է դառը հիասթափություններ և անհաջողություններ ապրի մարմնավոր և անարժան իրերի հանդեպ ունեցած իր սիրո մեջ: Ծանապարհին Աստուծու կողմից մարդուն առաքված շնորհը բռնադատող շնորհ չէ, այլ՝ միմիայն օգնող և թեթևացնող շնորհ: Եվ ամեն անգամ, երբ քրիստոնյա աշխարհը փորձել է այդ շնորհի էներգիան իշխանության և հարկադրանքի միջոցի վերածել, այն շեղվել է դեպի հակաքրիստոնեական, նույնիսկ հակաքրիստոսյան ուղիներ: Դոստոևսկին արտասովոր սրությամբ ընկալեց մարդկային ոգու ազատության մասին այդ քրիստոնեական ճշմարտությունը:

Ազատության ճանապարհը քրիստոնեական աշխարհի նոր մարդու ճանապարհն է: Անփիկ շրջանի մարդը կամ հին Արևելքի մարդը չէր ճանաչում այդ ազատությունը, նա կաշկանդված էր անհրաժեշտությամբ և բնության կարգավորությամբ, հլու՝ ճակատագրին: Միայն քրիստոնեությունն է մարդուն այդ ազատությունը փվել, *առաջին ազատությունը և վերջնական ազատությունը*: Քրիստոնեության մեջ ոչ միայն երկրորդ Ադամի՝ երկ-

րորդ անգամ հոգով ծնված մարդու ազատությունը երևան եկավ, այլև՝ առաջին Ադամի ազատությունը, ոչ միայն բարու ազատությունը, այլև՝ չարի ազատությունը: Նունական միտքը միայն ռացիոնալ ազատությունն էր հնարավոր համարում: Քրիստոնեությունը նաև ազատության իռացիոնալ սկիզբն է երևան հանում: Իռացիոնալ սկիզբը կյանքի բովանդակության մեջ է բացահայտվում, և նրանում է թաքնված ազատության խորհուրդը: Նելլենական միտքը վախենում էր այդ իռացիոնալ բովանդակությունից իբրև անսահմանից՝ ապեյրոն, իբրև նյութի, պայքարում էր նրա դեմ ձևի սկզբունքով՝ մրցնելով սահման՝ պետոս: Այդ պարճառով հույն աշխարհն ինքնամիտի ձև, վերջնակեպ էր դիտում, հեռասրանները չէր փնտրում: Քրիստոնեական աշխարհի մարդն այլևս այդպես անվերջությունից, կյանքի անվերջ բովանդակությունից չի վախենում: Նրան անսահմանությունն է բացահայտվում, հեռասրաններն են լայն բացվում: Սրա հետ է կապված նոր քրիստոնեական աշխարհի մարդու ազատության հանդեպ մի ուրիշ վերաբերմունքը, քան՝ անփիկ մարդունը: Ազատությունը դիմակայում է ձևի սկզբունքի, սահմանափակող վերջնակեպի բացառիկ փիրապետությանը: Ազատությունն անվերջություն է ենթադրում: Նույնի համար այն բացառապես քառսն էր: Քրիստոնեական աշխարհի մարդու համար անվերջությունը ոչ միայն քառս է, այլև՝ ազատություն: Մարդկային անվերջ ձգտումները միայն քրիստոնեական աշխարհում են հնարավոր: Ֆաուստը պարմության քրիստոնեական շրջանի երևույթ է, նա անկարելի էր անփիկ աշխարհում: Ֆաուստյան անվերջ ձգտումներն առավել բնորոշ են քրիստոնեական Եվրոպայի համար: Միայն քրիստոնեական աշխարհում է հնարավոր Բայրոնը: Մանֆրեդը, Կայենը, Դոն-ժուանը միայն քրիստոնեական Եվրոպայում կարող էին երևան գալ: Այդ ընդվզող ազատությունը, այդ փոթորկուք, խռովահույզ, սահման չճանաչող ձգտումները, կյանքի այդ իռացիոնալ բովանդակությունը երևույթներ են քրիստոնեական աշխարհի ներսում: Մարդկային անհատականության խռովությունն աշխարհակարգի դեմ, ընդդեմ ճակարագրի՝ ներքուստ քրիստոնեական երևույթ է: Նունական ողբերգությունը, ինչպես նաև հունական փիլիսոփայության գազաթներն ինքնամիտի անփիկ աշխարհի սահմաններից այն կողմ ճեղքման անխուսափելիությունն էին ցույց տալիս, նրանք դեպի նոր քրիստոնեական աշխարհն ուղղություն ունեին: Բայց հունական ողբերգության և հունական փիլիսոփայության մեջ դեռևս չէր բացահայտվել ֆաուստյան ոգին, այդ նոր, սարսափելի ազատությունը:

Ըմբռնաբացող ազատությունը Դոստոևսկու հերոսների մեջ լարվածության ծայրահեղ սահմանների է հասնում: Դոստոևսկու հերոսները քրիստոնեական աշխարհի ներսում նոր պահն են նշանավորում մարդկային ճակարագրում, ավելի ուշ պահ, քան Ֆաուստը: Ֆաուստը դեռևս այդ ճանապարհի կեսին է կանգնած: Ռասկոլնիկովը, Սյրալյոգինը, Կիրիլովը, Իվան Կարամազովն արդեն ճանապարհի վերջում են կանգնած: Ֆաուստից հետո դեռևս հնարավոր էր XIX դարը, որը ոգևորությամբ ճանիճների չորացումով զբաղվեց, որին էլ վերջում հանգեց Ֆաուստը: Դոստոևսկու հերոսներից հետո անիմանալի XX դարն է բացվում, մեծ անհայտությունը, որն իրեն հայտնաբերում է իբրև մշակութային ճգնաժամ, իբրև համաաշխարհային պարմության մի ամբողջ շրջանի ավարտ: Մարդկային ազատության փնտրությունը նոր փուլ է թևակոխում: Դոստոևսկու մոտ ազատությունը ոչ միայն քրիստոնեական, այլև՝ նոր ոգու երևույթ է: Այն բուն քրիստոնեության մեջ նոր ժամանակաշրջանի է պարվանում: Մա ազատության արտակարգ փրանսցննդներ ըմբռնողության շրջանից

քրիստոնեության անցումն է դեպի առավել իմանենար ըմբռնողության շրջանը: Մարդը դուրս է գալիս արտաքին ձևի, արտաքին օրենքի շրջանակներից և փառապալից ուղիներով իրեն ներքին լույս է հայթայթում: Ամեն ինչ փեղափոխվում է մարդկային ոգու ամենախորքը: Այնպեղ պեքը է նոր աշխարհ երևան գա:

Քրիստոնեության ճշմարտությունը սահմանից դուրս առարկայացնող փրանսցենդենար գիտակցությունը չէր կարող մինչև վերջ բացահայտել քրիստոնեական ազատությունը: Քրիստոս պեքը է մարդուն հայտնվի նրա ազատ ուղիներում իբրև վերջնական ազատություն՝ ազատություն ճշմարտության մեջ: Նա խորքում բացվում է: Առաջին ազատությունը մարդուն փրամադրվում է, այն սպառում է իրեն և իր հակադրությանն է վերածվում: Դոսմարդուն փրամադրվում է, այն սպառում է իրեն և իր հակադրությանն է վերածվում: Գոստոնսկին հենց ազատության այս ողբերգական վիճակն է ցույց փալիս իր հերոսների ճափարագրում. ազատությունն ինքնակամության, մարդու ըմբոսփացող ինքնահաստատման է վերափոխվում: Ազատությունն անբովանդակ, դափարկ է դառնում, այն ամայացնում է մարդուն: Այդպես անբովանդակ և դափարկ է Սփավրոգինի և Վերսիլովի ազատությունը, անձնավորություն է կազմալուծում Սվիդդիգայրովի և Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի ազատությունը: Ոճրագործության է հասցնում Ռասկոլնիկովի և Պյոտր Վերխովենսկու ազատությունը: Կիրիլովի և Իվան Կարամազովի դիվական ազատությունը մարդուն կորստյան է մափում:

Ազատությունը որպես ինքնակամություն ոչնչացնում է իրեն, իր հակադրությանն է փոխվում, բարոյագրկում և կործանում է մարդուն: Այսպիսի ազատությունը ներքին իմանենար անխոսափելիությամբ սփրկության է փանում, մարում է մարդու պարկերը: Արտաքին պարկեր չէ, որ սպասում է մարդուն, օրենքը չէ, որ դրսից մարդու վրա դնում է իր ծանր ձեռքը, այլ ներքուսր իմանենարդրեն երևան եկող Ասրվածային սկզբունքն է խոցում մարդկային խիղճը, Ասրծու դաղող կրակից այրվում է մարդն այն խավարի և դափարկության մեջ, որն ինքն է ընկրել իր համար: Այդպիսին է մարդու ճակարագիրը, մարդկային ազատության ճակարագիրը: Եվ Դոստոնսկին ցնցող հանճարեղությամբ բացահայտում է այդ ճակարագիրը:

Մարդը պեքը է գնա ազատության ճանապարհով: Բայց ազատությունը սփրկության է վերածվում, ազատությունը կործանում է մարդուն, երբ մարդն իր ազատության սանճարճակության մեջ չի ուզում ճանաչել ոչ մի գերագույն բան, քան մարդն է: Եթե բուն մարդուց գերագույն ոչինչ չկա, ապա նաև մարդը չկա... Եթե ազատությունը բովանդակություն, առարկա չունի, եթե մարդկային ազատությունը հարաբերություն չունի Ասրվածային ազատության հետ, ապա ազատություն էլ չկա: Եթե ամեն ինչ թույլափրված է մարդուն, ապա մարդկային ազատությունը վերածվում է ինքնասփրկության: Իսկ ինքնասփրկությունը բուն մարդուն կործանում է: Մարդկային պարկերը պահպանվում է մի բնության կողմից, որ գերագույն է, քան նա ինքն է:

Մարդկային ազատությունն իր վերջնական արտահայտությանն է հասնում գերագույն ազատության մեջ, ճշմարտության մեջ եղող ազատության մեջ: Այսպիսին է ազատության անխոսափելի դիալեկտիկան: Այն փանում է դեպի ասրվածամարդկային ճանապարհ: Ասրվածամարդության մեջ մարդկային ազատությունն Ասրվածային ազատության հետ է միավորվում, մարդկային պարկերը՝ Ասրվածային պարկերի: Այդ ճշմարտության լույսը ձեռք է բերվում ներքին փորճառությամբ, ազատության ներքին վերացումով: Վերադարճ չի

կարող լինել դեպի արտաքին օրենքի բացառիկ փրկապետություն, դեպի անհրաժեշտությամբ և բռնադատությամբ կյանք: Մնում է միայն խորպակված ազատության վերականգնումը՝ ճշմարտության, այսինքն՝ Քրիստոսի մեջ: Բայց Քրիստոս արտաքին օրենք չէ, կյանքի արտաքին կարգ չէ: Նրա թագավորությունն անհավակցելի է այս աշխարհի թագավորության հետ: Եվ Դոստոևսկին բարկությամբ մերկացնում է հարկադրանքի և բռնության կրոնի փանող քրիստոնեության բոլոր շեղումները: Գոթականության լույսը, լիակատար ազատության բարօրությունը չեն կարող դրսից ձեռք բերվել: Նենց Քրիստոս է վերջնական ազատությունը, ոչ այն անբովանդակ, ընդվզող, ինքնամեկուսացող ազատությունը, որը կործանում է մարդուն, ոչնչացնում նրա պարկերը, այլ՝ այն իմաստնալից ազատությունը, որը հաստատում է մարդու պարկերը հավիտենության մեջ: Այս Գոթականության մասին պետք է վկայի Ռասկոլնիկովի և Սփավրոզիսի, Կիրիլովի և Իվան Կարամազովի ճակատագիրը: Միայն ուղղորդված ազատությունը կործանեց նրանց: Բայց սա չի նշանակում, որ նրանց պետք էր հարկադրման, արտաքուստ կարգավորող օրենքի բացառիկ իշխանության փակ պահել: Նրանց կործանումը լուսաբեր է մեզ համար: Նրանց ողբերգությունն ազատությանը ձոնված օրհներգ է:

Դոստոևսկին մի գաղափար ուներ, որ առանց մեղքի և չարի ազատության, առանց ազատության փորձության համաշխարհային ներդաշնակությունը չի կարող ընդունվել: Նա ընդվզում է ամեն փեսակ հարկադրական ներդաշնակության դեմ՝ լինի դա կաթոլիկական, թեոկրատական կամ սոցիալիստական: Մարդու ազատությունը չի կարող ընդունվել հարկադրվող կարգի կողմից, իբրև դրա շնորհ: Մարդու ազատությունը պետք է նախորդի այսպիսի կարգին և այսպիսի ներդաշնակությանը: Ազատության միջով պետք է անցնի դեպի կարգ ու կանոն և ներդաշնակություն, դեպի մարդկանց համաշխարհային միություն փանող ճանապարհ:

Դոստոևսկու անսիրությունը կաթոլիկության և սոցիալիզմի հանդեպ, ինչպես հետո փեսանելի կլինի, կապված է հարկադրվող կարգ ու կանոնի և ներդաշնակության հետ հաշտվելու այդ անհնարինությունը: Մարդկային ոգու ազատությունը նա հակադրում է և՛ կաթոլիկությանը, և՛ սոցիալիզմին: Մրանում է ծաղրական և հետադիմական կերպարանքով ջնջվածների բունտի իմաստը: Դոստոևսկին չի ընդունում ո՛չ այն դրախտը, որում դեռևս անկարելի է ոգու ազատությունը, ո՛չ այն դրախտը, որում այն արդեն հնարավոր չէ: Մարդը պետք է անցնեք հարկադրվող աշխարհակարգից արքանկումի միջով, պետք է իր ոգու ազատության միջով անցկացնեք աշխարհակարգը: Նավաբքը, որի վրա Դոստոևսկին ցանկանում էր կազմակերպել հասարակական կարգը, պետք է ազատ հավաք լինի: Մարդկային խղճի ազատության վրա է հենվում այդ հավաքը: «Կասկածների հնոցի միջոցով իմ Օվսաննան ծնվեց», - գրում է Դոստոևսկին իր մասին: Եվ նա կցանկանար, որ ամեն հավաքը կասկածների հնոցում թրծվեր:

Դոստոևսկին, հավանաբար, խղճի ազատության ամենակրթոք պաշտպանն է եղել, որպիսին միայն քրիստոնեական աշխարհն է ճանաչել: «Նրանց հավաքի ազատությունը Քեզ համար ամեն ինչից թանկ էր», - ասում է Մեծ Նավաբքենիչը Քրիստոսին: Եվ նա կարող էր այդ ասել հենց Դոստոևսկու: «Դու մարդու ազատ սերը կամեցար»: «Նին՝ անդրդվելի օրենքի փոխարեն մարդն ինքն այսուհետև ազատ սրտով պետք է որոշե՛ր՝ ո՞րն է բարին և ո՞րը՝ չարը, իր առջև միայն Քո պարկերն ուղեցույց ունենալով»: Քրիստոսին ուղղ-

ված Մեծ Հավաքաբանիչի այս խոսքերի մեջ հենց Դոստոևսկու հավաքքի խոսարովանությունն է զգացվում: Նա մերժում է «հրաշքը, խորհուրդը և հեղինակությունը»՝ իբրև մարդկային խղճի հանդեպ բռնություն, իբրև մարդուն իր ոգու ազատությունից զրկում: Երեք փորձյուն խղճի հանդեպ բռնություն, իբրև մարդուն իր ոգու ազատությունից զրկում: Երեք փորձյունները, որոնցով սափառան անապատում փորձում էր Քրիստոսին, մարդկային ոգու ազատության, մարդկային խղճի ազատության դեմ էին ուղղված: Հրաշքը հավաքքից պետք է լինի և ոչ թե հավաքքը՝ հրաշքից: Այդ ժամանակ է միայն հավաքքն ազատ:

Քրիստոսի երևույթի մեջ ոչ ոք չի բռնանում մարդկային խղճի վրա: Գողգոթայի կրոնը ազատության կրոն է: «Ծառայի կերպարանքով» աշխարհ եկած և խաչի վրա խաչված, աշխարհի կողմից խոշորագված Աստուծու Որդին մարդկային ոգու ազատությանն է դիմում: Քրիստոսի պարկերի մեջ ոչինչ չի բռնադատում, չի ստիպում հավաքալու Նրան իբրև Աստուծու: Այս աշխարհի թագավորության մեջ Նա կարողություն և զորություն չէր: Նա թագավորություն էր քարոզում, որ այս աշխարհից չէ: Մրանում է թաքնված Քրիստոնեության հիմնական խորհուրդը՝ ազատության խորհուրդը: Ոգու արքայատվոր ազատություն, ազատ հավաքքի սիրանք, «աներևույթ իրերի» ազատ մերկացում է պետք, որպեսզի Հիսուսի՝ ծառայի կերպարանքի հետևում սեփական Աստուծուն փեսնել: Եվ երբ Պետրոսն ասաց Հիսուսին՝ «Դու ես Քրիստոսը՝ Կենդանի Աստուծու Որդին», նա ազատության սիրանք գործեց: Մարդկային ազատ խղճի խորունկ ընդերքից լավեցին այս խոսքերը, որոնք կանխորոշեցին համաշխարհային պատմության ընթացքը: Եվ յուրաքանչյուր մարդ քրիստոնյա աշխարհում իր ազատ ոգու, իր ազատ խղճի խորքից պետք է կրկնի Պետրոսի խոսքերը: Մրանում է քրիստոնյայի ողջ արժանավորությունը: Միայն Պետրոսին չէ, որ հատուկ է ոգու ազատության այս արժանավորությունը, այլ՝ յուրաքանչյուր քրիստոնյայի:

Դոստոևսկին հավաքում էր, որ քրիստոնեական ազատությունն արևելյան ուղղափառության մեջ ավելի է պահպանվել, քան՝ արևմտյան կաթոլիկության: Այսպեղ նրա կողմից չափազանցում է եղել: Նա հաճախ է անարդարացի եղել կաթոլիկ աշխարհի նկատմամբ, որն անհնարին է ամբողջությամբ հակաքրիստոնեական ոգով համակված ընդունել: Եվ նա չէր ցանկանում շեղումներ և խափանումներ փեսնել ուղղափառ աշխարհում: Բյուզանդականության, կայսերական թեոկրատիայի մեջ ավելի շար քրիստոնեական ազատություն չկար, քան՝ պապական թեոկրատիայի: Բայց ազատության վերաբերյալ հարցում ուղղափառության մի որոշ առավելություն կաթոլիկության նկատմամբ նա ճիշտ էր նկատել: Ուղղափառության թերակառույց լինելն այսպեղ օգնում է: Իսկ ինքը ոգու ազատության իր կրոնի մեջ դուրս է գալիս պատմական ուղղափառության և կաթոլիկության սահմաններից, նա դիմում է գալիքին, ազատության վերաբերյալ նրա հայտնություններում ինչ-որ մարգարեական բան կա: Բայց նա, այնուամենայնիվ, մարմնով ու արյամբ ռուսական ուղղափառությունից է սերում: Դոստոևսկին երևան հանեց, որ հակաքրիստոսյան սկիզբը ոչ այլ ինչ է, քան՝ ոգու ազատության ժխտում, քան՝ բռնություն մարդկային խղճի վրա: Եվ նա խորությամբ ուսումնասիրում է այդ սկիզբը: Քրիստոս ազատություն է, իսկ հակաքրիստոս՝ հարկադրանք, բռնություն, ոգու ստրկություն:

Հակաքրիստոսյան սկիզբը պատմության մեջ փարբեր՝ կաթոլիկական թեոկրատիայից մինչև աթեիստական սոցիալիզմ և անարխիզմ, կերպարանքներ է ընդունում: «Կասկածների հնոցի միջով» պետք է անցնեն Ռասկոլնիկովը, Սփավրոզինը, Կիրիլովը, Վերսիլովը, Իվան Կարամազովը: Նրանց ոգու, նրանց ազատ խղճի խորքից պետք է հնչեն Պետրոսի

խոսքերը. «Դու ես Քրիստոս՝ Կենդանի Աստծու Որդին»: Դոստոնակին զգաց, որ նրանց փրկությունը դա է: Նրանք պետք է կործանվեն, եթե իրենց մեջ ոգու ազատ գործունեություն չգտնեն Քրիստոսի մեջ ճանաչելու Աստծու Որդուն: Բայց եթե ճանաչեն, այդ դեպքում ընդհատակյա մարդու ազատությունն Աստծու որդիների ազատությանը կվերածվի: Ազատության ուսումնասիրության ուղին Դոստոնակին սկսում է «ընդհատակյա մարդու» ազատությամբ: Այդ ազատությունն անսահման է ներկայանում: Ընդհատակյա մարդն ուզում է անցնել մարդկային բնության սահմանները, նա քննում և փորձում է այդ սահմանները: Եթե մարդն այդքան ազատ է, ապա արդյո՞ք ամեն ինչ թույլատրելի չէ, արդյո՞ք ցանկացած ոճրագործություն չի թույլատրվում հանուն գերագույն նպատակների, ընդհուպ մինչև հայրասպանություն, արդյո՞ք Մադոննական և Սոդոմական իդեալը համարժեք չեն, արդյո՞ք մարդը չպիտի ձգարի Աստված դառնալուն: Արդյո՞ք մարդը պարտավոր չէ ինքնակամություն հռչակելու:

Դոստոնակին զգաց, որ ընդհատակյա մարդու ազատության մեջ մահվան սերմն է դրված: Մարդկային բնության սահմաններն անցնող Ռասկոլնիկովի ազատությունը սեփական ոչնչության, փկարության և անազատության գիտակցությունն է ծնում: Ստավրոգինի ազատությունը բացարձակ անգործության է վերածվում, անարարքերության, անձնավորության հյուծումի և մարումի է վերածվում: Աստված դառնալ ցանկացող Կիրիլովի ազատությունն ավարտվում է սարսափելի, անպարտ կործանումով: Թերևս այսպես է Կիրիլովն է առավել կարևորը: Կիրիլովն ինքնակամությունն իբրև պարտք, իբրև սուրբ պարտականություն է ընդունում: Նա պետք է ինքնակամություն հայտարարի, որպեսզի մարդը գերագույն վիճակի հասնի: Եվ նա, կրքերից և հակումներից հրաժարված, մաքուր մարդ է, նրանում անշնորհական սրբության գծեր կան: Բայց նույնիսկ ամենամաքուր մարդը, որը մերժել է Աստծուն և կամեցել ինքն աստված դառնալ, կործանման է դատապարտված: Նա այլևս կորցնում է իր ազատությունը: Նա մոլագար է, նա ոգիների իշխանության փակ է, որոնց բնությունը ինքն էլ չի ճանաչում: Եվ Կիրիլովը մեզ ներկայացնում է իր մեջ կենտրոնացած հանդարտ դիվանագիտության և մոլագարության պարկերը: Նրա ոգու ազատության մեջ արդեն վերասերման հիվանդագին գործընթացներ են փրդի ունեցել: Ամենից քիչ նա ազատ ոգու փեր մարդ է: Մարդաստվածության ճանապարհներին խորտակվում է մարդկային ազատությունը և կործանվում մարդը: Սա Դոստոնակու հիմնական թեման է: Այսպես է կործանվում ազատությունը նաև Դոստոնակու մյուս երկարված հերոսների մոտ, ինքնակամության ճանապարհներին բոլոր մոլորվածների մոտ: Սվիդրիգայլովի կամ Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի մեջ մենք արդեն անձնավորության այնպիսի քայքայման ենք հանդիպում, որի դեպքում ազատության մասին խոսք անգամ չի կարող լինել:

Նեշտասիրության անգուստ, անսահման ազատությունը մարդուն իր ստրուկն է դարձնում, զրկում ոգու ազատությունից: Դոստոնակին մեծ վարպետ է չար կրքով կամ չար գաղափարով բռնվածության ազդեցության փակ անձնավորության վերասերումի և այլասերումի նկարագրության մեջ: Նա ուսումնասիրում է այդ բռնվածության գոյաբանական հեղուկանքները: Երբ սանձարձակ ազատությունը մոլագարության է վերածվում, այն կործանվում է, այն այլևս գոյություն չունի: Երբ մարդն սկսում է դիվոտել, նա դեռևս ազատ չէ: Արդյո՞ք ազատ է Վերսիլովը՝ Դոստոնակու ամենաազնիվ կերպարներից մեկը: Եկարերին նա Նիկոլանայի նկարմամբ նրա կիրքը մոլագարություն է: Այդ կիրքը մեխված է մեջը:

Այն հյուժեց նրան: Գաղափարների հանդեպ իր վերաբերմունքի մեջ նա ազաբ կամային ընտրություն չի ճանաչում: Նա կաղափարները գրավում են նրան: Նա ցանկանում էր իրեն ազատություն վերապահել, այդ պարճառով էլ կորցրեց այն: Նա երկարված է: Երկարված մարդը չի կարող ազաբ լինել: Բայց ամեն ոք, ով սիրո առարկայի ազաբ ընտրության ակտ չի կատարում, դարապարված է երկարվածության: Ազատության թեմայի մշակումը գագաթնակետին է հասնում «Կարամազով եղբայրներում»:

Իվան Կարամազովի ինքնակամությունն ու ընդվզումը՝ անշնորհական մարդկային ազատության ուղիների գագաթնակետն է: Այստեղ արատավոր հանճարեղությամբ պարզվում է, որ ազատությունն իբրև ինքնակամություն և մարդկային ինքնահաստատում պետք է հանգի ոչ միայն Աստծու, ոչ միայն աշխարհի և մարդու ժխտմանը, այլև՝ հենց ազատության: Ազատությունն իրեն ոչնչացնում է: Եվ սրանով ավարվում է գաղափարական դիալեկտիկան: Դոստոևսկին հայտնաբերում է, որ մթին, ջրուսավորված ազատության ճանապարհի վերջում ազատության լիակատար ոչնչացում, չար հարկադրանք ու չար անհրաժեշտություն է դարանակարում: Մեծ Նավարաքնիչի, ինչպես նաև Շիգալյովի ուսմունքն ինքնակամության, աստվածամարտության ծնունդ են: Ազատությունն ինքնակամության է վերածվում, ինքնակամությունը հարկադրանքի է վերափոխվում: Սա ճակարագրական գործընթաց է: Մարդկային ոգու ազատությունը, կրոնական խղճի ազատությունը ժխտվում է նրանց կողմից, ովքեր գնացել են ինքնակամության ճանապարհներով:

Նրանք, ովքեր գնացել են ինքնակամության և ինքնահաստատման ճանապարհներով, որոնք իրենց ազատությունն ընդդեմ Աստծու են ուղղել, չեն կարող պահպանել ազատությունը, նրանք անխուսափելիորեն նրա ուրանհարմանն են հանգում: Նրանք անխուսափելիորեն պետք է հրաժարվեն մարդկային ոգու անդրանկությունից, նրա անդրանիկ ազատությունից, նրանք անհրաժեշտության թագավորությանն են մարնում ազատությունը, նրանք մեծագույն բռնությունների են հասնում: Սա Դոստոևսկու ամենահանճարեղ կուսումներից մեկն է: «Անսահման ազատությունից ելնելով», - ասում է Շիգալյովը, - «ես ավարում եմ անսահման դեսպոտիզմով»: Այդպիսին է միշտ եղել հեղափոխական ազատության ճանապարհը: Այդպես, ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ «անսահման ազատությունից» անցում է կատարվել դեպի «անսահման դեսպոտիզմ»: Ազատությունն իբրև կամայականություն և ինքնակամություն, անաստված ազատությունը չի կարող «անսահման դեսպոտիզմ» չառաջացնել: Այդպիսի ազատությունն իր մեջ ամենամեծ բռնությունն է պարունակում: Այսպիսի ազատությունն իր մեջ ազատության երաշխիք չունի: Ինքնակամության ընդվզումը կյանքի Իմաստի, ճշմարտության ժխտմանն է տանում: Կենդանի Իմաստն ու կենդանի ճշմարտությունը նենգափոխվում են կյանքի ինքնակամ կարգավորումով, հասարակական մրջանակցում մարդկային բարեկեցության սրեղծումով: Ազատության «անսահման դեսպոտիզմի» վարասերումի այս գործընթացը Դոստոևսկու աշխարհայեցողության մեջ շար կարևոր տեղ է զբաղեցնում:

Արտաքինից այնքան ազատասեր ռուս ձախ մտավորականության հեղափոխական գաղափարախոսության մեջ նա «անսահման դեսպոտիզմի» հնարավորությունն է մերկացնում: Նա շար բան առաջինը տեսավ և ուրիշներից ավելի հեռուն տեսավ: Նա գիտեր, որ հեղափոխությունը, որը նա զգացել էր Ռուսաստանի ընդերկրյա, ենթահողային շերտում, ազատություն չի բերի, որ մարդկային ոգու լիակատար ստրկացմանն ուղղված շարժում է

սկսվել: Արդեն «Նորթեր ընդհարակից» սրեղծագործության հերոսի աաշխուհի մարքերում նշմարվում է այն, ինչ վերջնականապես դրսևորվում է Պ. Վերխովենսկու, Շիգալյովի, Մեծ Նավարաքենիչի մեջ: Մղձավանջի նման Դոստոևսկուն ճնշում և հեղապնդում էր այն միտքը, որ Քրիստոսի ճշմարտությանը դավաճանած մարդկությունն իր ընդվզման և ինքնակամության մեջ պետք է հանգի Շիգալյովի, Պ. Վերխովենսկու, Մեծ Նավարաքենիչի «անսահման դեսպոտիզմի» համակարգին: Դա միևնույն համակարգն է: Նրանում, հանուն մարդկանց երջանկության, մարդկային ոգու ազատությունից հրաժարում է տեղի ունենում: Նասարակական էվդեմոնիզմը հակադիր է ազատությանը: Եթե չկա ճշմարտություն, հասարակական երջանկության հարկադրական կազմակերպումից բացի ոչինչ չի մնում: Նեղափոխությունը ոչ թե հանուն ազատության է կատարվում, այլ՝ հանուն նույն սկզբունքների, հանուն որոնց բոցավառվել են հավարաքենության խարույկները, հանուն «հազար միլիոն երջանիկ մանուկների»:

Մարդը չէր կարող րանել ոգու ազատության լուծը, նա զարհուրեց ազատության րանապալից ճանապարհից: Եվ նա հրաժարվում է ազատությունից, դավաճանում է ազատությանը, նրանից դեպի մարդկային երջանկության հարկադրական կարգավորում է փախչում: Ազատության այս ժխտումն սկսեց վերջինիս՝ իբրև ինքնակամության անսահման հասարակումից: Այսպիսին է ազատության ճակարագրական դիալեկտիկան: Բայց եթե կեղծ ազատությունն «անսահման դեսպոտիզմի», ազատության կատարյալ ոչնչացումի է վերածվում, ապա կեղծ հավասարությունն էլ չսված անհավասարության, մեծամասնության նկատմամբ արտոնյալ փոքրամասնության բռնակալական գերիշխումի պետք է հանգեցնի:

Դոստոևսկին միշտ կարծել է, որ բացարձակ հավասարության գաղափարով բռնված հեղափոխական դեմոկրատիան և հեղափոխական սոցիալիզմն իրենց վերջնական սահմաններում պետք է հանգեցնեն մնացյալ մարդկության վրա ոչ մեծ կույրի գերիշխանությանը: Այդպիսին է Շիգալյովի համակարգը, նույն է նաև Մեծ Նավարաքենիչի համակարգը: Դոստոևսկին «Գորոխ օրագրում» մեկ անգամ չէ, որ վերադարձել է այս մտքին: Այդ միտքը րանջել է նրան, հանգիստ չի տվել: Գոյություն ու ճշմարիտ հավասարությունը Քրիստոսի մեջ, Աստվածամարդության ճանապարհին են միայն հնարավոր: Նակաքրիստոսյան ինքնակամության ճանապարհին, մարդաստրվածության ճանապարհին միայն չսված բռնակալություն է սպասում: Նամընդհանուր երջանկության, առանց Աստծու մարդկանց համընդհանուր միասնության գաղափարով բռնվածությունն իր մեջ մարդու կործանման, նրա ոգու ազատության ոչնչացման սարսափելի վրանգն է պարունակում: Այսպիսին են ազատության իբրև ինքնակամության և ընդվզման իրական հետևանքները: Բայց ինքնակամությունն ու ընդվզումն ընդդեմ համաշխարհային իմաստի՝ մարդկային գիտակցության համար ազատության գաղափարի բուն մուտքն են արգելում:

Ոգու ազատությունն սկսում է գաղափարաբանորեն ժխտվել իբրև հավիտենական Իմաստից կտրված մտքի համար անհասանելի դարձած մի բան: «Էվկլիդեսյան միտք» արտահայտությունը, որը Դոստոևսկին սիրում է, անզոր է հասու լինելու ազատության գաղափարին, այն անմատչելի է նրան՝ իբրև միանգամայն իռացիոնալ խորհուրդ: Աստծու դեմ «Էվկլիդեսյան մտքի» ընդվզումն ազատության ժխտման, ազատությունը չըմբռնելու հետ է կապված: Եթե չկա ազատություն՝ իբրև աշխարհաստեղծման վերջին խորհուրդ, ապա այս

աշխարհն իր փանջանքներով և փառապանքներով, անմեղորեն հոգեհան եղած մարդկանց արցունքներով հանդերձ չի կարող ընդունվել: Եվ չի կարող ընդունվել այսպիսի սարսափեղևի, այլանդակ աշխարհ սպեղծած Աստված: Իր ինքնակամության և ընդվզումի, իր «Էվկլիդեսյան մրքի» ապստամբության մեջ մարդը երևակայում է, որ ինքը կարող էր ավելի լավ աշխարհի սպեղծել, որում այդպիսի չարիք, այդպիսի փառապանքներ չէին լինի, չէր լինի անմեղ մանկան արցունքի շիթ: Այդպիսին է հանուն բարու սիրո ստրվածամարտության փրամաքանությունը: Աստվածուն անկարելի է ընդունել, որովհետև աշխարհն այսքան վատն է, որովհետև նման ստություն ու անարդարություն է փիրում աշխարհում:

Ազատությունն այս ստրվածամարտությանն ու աշխարհամարտությանը հասցրեց: Եվ այսպեղ դարձյալ ազատության ճակարագրական դիպելկրիկան, ազատության ներքին ողբերգությունն է երևան գալիս: Պարզվում է, որ ընդվզող ազատությունը հանգեցրեց ազատության բուն գաղափարի ժխտմանը, ազատության լուսյի ներքո աշխարհի խորհուրդն ու Աստծու խորհուրդը հասկանալու անհնարինությունը: Քանզի, արդարև, կարելի է ընդունել Աստծուն և ընդունել աշխարհը, պահպանել հավատքն աշխարհի Իմաստի նկատմամբ, եթե կեցության հիմքում ընկած է իռացիոնալ ազատության խորհուրդը: Այդ դեպքում կարող է միայն աշխարհի մեջ չարի արմատն ըմբռնվել և այդ չարի գոյության մեջ Աստված արդարացվել: Աշխարհում այդքան չարություն և փառապանք կա, քանի որ աշխարհի հիմքում ազատությունն է ընկած: Եվ ազատության մեջ է աշխարհի ու մարդու ողջ արժանավորությունը: Միայն ազատության ժխտման գնով կարելի է խուսափել չարիքից և փառապանքից: Այդ դեպքում աշխարհը հարկադրաբար բարի ու երջանիկ կլինեք: Բայց այն կըզրկվեր իր ստրվածնմանությունից: Քանզի այդ ստրվածանմանությունը նախ և առաջ ազատության մեջ է: Այն աշխարհը, որ կստեղծեր Իվան Կարամազովի ընդվզող «Էվկլիդեսյան միքը», ի փարբերություն չարիքով և փառապանքով լի Աստծու աշխարհի, բարի ու երջանիկ աշխարհ կլինեք: Սակայն նրանում ազատություն չէր լինի, նրանում ամեն ինչ հարկադրաբար ռացիոնալիզացված կլինեք: Դա սկզբիցնեթ, առաջին իսկ օրից այն երջանիկ հասարակական մրջնանոցը, այն հարկադրական ներդաշնակությունը կլինեք, որը կցանկանար թոթափել «հեփադիմական և ծաղրական կերպարանքով ջենտլմենը»:

Ճամաշխարհային գործընթացի ողբերգություն չէր լինի, բայց չէր լինի նաև ազատության հեղ կապված Իմաստը: «Էվկլիդեսյան միքը» աշխարհը կառուցել կարող էր բացառապես անհրաժեշտության վրա և այդ աշխարհը բացառապես ռացիոնալ աշխարհ կլինեք: Իռացիոնալ ամեն ինչ նրանից արմատախիլ կարվեք: Բայց Աստծու աշխարհը «Էվկլիդեսյան մրքին» առողիելի Իմաստ չունի: Այդ Իմաստը «Էվկլիդեսյան մրքի» համար անըմբռնելի խորհուրդ է: «Էվկլիդեսյան միքը» երեք չափումներով է սահմանափակված: Իսկ Աստծու աշխարհի Իմաստը կարող է ըմբռնվել չորրորդ չափում փեղափոխվելով:

Ազատությունը չորրորդ չափման ճշմարտություն է, այն անհասանելի է երեք չափումների սահմաններում: «Էվկլիդեսյան միքն» անգոր է ազատության վերաբերյալ նյութին լուծում փայ: Դոստոևսկու մոտ բոլոր ինքնակամություն ու ընդվզում հայտարարողներն ազատության ժխտմանն են հանգում, որովհետև նրանց միքը նեղանում է, երեք չափումների սահմանների մեջ մրնում, փակում է նրանց համար փարաշխարհները: Ընդվզումն սկսվեց ազատությունից, բայց ավարտվեց աշխարհը բացառապես անհրաժեշտության վրա կառուցելու փորձով: Դոստոևսկին ապշեցուցիչ դիպելկրիկական ուժով մարդկային գիտակ-

ցության համար, ընդվզող ռացիոնալիզմի և մարդկային կյանքի համար, ընդվզող հեղափոխականության ճակատագրական հետևանքներն է ուսումնասիրում: Անսահման ազատությունից սկզբնավորված ընդվզումը մրաժողության մեջ՝ անսահման իշխանության և կյանքում անխուսափելիորեն անսահման դեսպոտիզմի է հասնում: Այդպես է շարադրում Դոստոևսկին իր հիանալի թեոդիցիան, որը միաժամանակ անպրատպողիցիա է: Միայն մի հավերժական առարկություն կա Աստծու դեմ՝ աշխարհում չարի գոյությունը: Դոստոևսկու համար այդ թեման հիմնականն է: Եվ նրա ողջ սրբեղծագործությունն այդ առարկայումի պարասխանն է: Եվ ես այսպես պարադոքսալորեն կձևակերպեի այդ պարասխանը: *Է Աստված հենց այն պարհառով, որ աշխարհում կա չարիք և ցառապանք, չարի գոյությունը Աստծու լինելության ապացույցն է: Եթե աշխարհը բացառապես բարի և լավ լիներ, ապա Աստծու կարիքը չէր լինի, ապա աշխարհն այլևս աստված կլիներ: Է Աստված, որովհետև կա չար: Մա նշանակում է, որ Է Աստված, որովհետև ազատությունն կա:* Եվ Դոստոևսկին Աստծու լինելությունը ազատության՝ մարդկային ոգու ազատության միջոցով է ապացուցում: Ովքեր ժխտում են մարդկային ոգու ազատությունը, ժխտում են և Աստծուն, և ընդհակառակն:

Հարկադրաբար բարի և լավ աշխարհը, անխուսափելի անհրաժեշտության պարճառով ներդաշնակ աշխարհն անաստված աշխարհ կլիներ, կլիներ ռացիոնալ մեխանիզմ: Եվ ովքեր մերժում են Աստծուն և մարդկային ոգու ազատությունը, ձգտում են աշխարհն այդպիսի ռացիոնալ մեխանիզմի, այդպիսի հարկադրական ներդաշնակության վերածելու: Ազատության վերաբերյալ թեման Դոստոևսկին դիմամիկ և ոչ թե սրապիկ է մեկնաբանում, նրա ազատությունը շարունակ դիալեկտիկական շարժման մեջ է գտնվում, նրանում ներքին հակասություններ են դրսևորվում, և այն մի փուլից մյուսն է անցնում: Ուստի, սրապիկ մրաժողության և սրապիկ գիտակցության փեր մարդկանց համար դժվար է հասկանալ ազատության վերաբերյալ Դոստոևսկու մեծ հայտնությունները: Նրանք «այո» կամ «ոչ» են պահանջում այն ժամանակ, երբ այդպիսի պարասխաններ չեն կարող տրվել: Ազատությունը մարդու և աշխարհի ողբերգական ճակատագիրն է, հենց Աստծու՝ վիճակը և այն կեցության հենց կենտրոնում է գտնվում՝ իբրև նրա նախասկզբնական խորհուրդ: Մենք դեռ կրեանենք, որ ազատության վերաբերյալ դիալեկտիկական Դոստոևսկու մտք իր լրումին է հասնում «Մեծ Հավաքաբանիչի մասին լեզենդի մեջ», որում կենտրոնանում են բոլոր թեմաները, միավորված են բոլոր թելերը:

*Ռուսերենից թարգմանեցին՝*

ԳԵՎՈՐԳ ԱՐԵՂԱ ՍԱՐՈՅԱՆ  
ԱՐԱՄ ՍԱՐԿԱՎԱԳ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ